ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2018 թվականի մարտի 23-ին

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 42. Շահերի հայտարարագրի բովանդակությունը

1. Հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած բաժնետոմսերի/բաժնեմասերի քանակը, տոկոսը և ձեռքբերման օրը, ամիսը, տարին՝ արտոնյալ և մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք տվող բվեարկող բաժնետոմսերի մասով, ինչպես նաև տեղեկատվություն իրավաբանական անձի տարեկան հասույթի առնվազն 15 տոկոսի չափով ստացված օգուտի մասին , հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

Deleted: 1. Հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում առնվազն 10 տոկոս մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, բաժնեմասը, հասցեն:¶